

«ALISO CANYON»-Ի ԳԱԶԻ ԱՐՏԱՀՈՍՔ



Առողջական փաստերի ամփոփում

Ակնարկ

Տվյալ փաստերի ամփոփումը տեղեկություններ է տրամադրում «Aliso Canyon» պահեստավորման հաստատությունում բնական գազի արտահոսքի մասին և դրա հետ կապված առողջական ազդեցությունների մասին Փորթեր Ռենչ բնակիչների վրա: Բնական գազի արտահոսքը սկսել է հոկտեմբերի 23-ին: Հանրային առողջապահության բաժանմունքը (Հանրային առողջապահություն) որոշել է, որ այս հաստատությունից տեղի ունեցող արտահոսումն առողջական ազդեցություններ է ունենում որոշ մարդկանց վրա Փորթեր Ռենչ համայնքում: Այս քիմիկատները ազդեցությունը սովորաբար չի առաջացնում մշտական կամ երկարաժամկետ առողջական խնդիրներ: Այնուամենայնիվ, այս ազդեցության հետևանքով կարող են առաջանալ կարճատև, կրկնվող ախտանիշներ, քանի դեռ հոտը շարունակվում է, ու որոշ մարդիկ կարող են ավելի զգայուն լինել դրա հանդեպ, քան մյուսները: Դրսի օդը ստուգվում է, և Հանրային առողջապահությունը կշարունակի գնահատել օդի որակը, մինչև գազի արտահոսքի դադարեցումը:

Բնական գազ

Բնական գազը Կալիֆոռնիայում հիմնականում բաղկացած է մեթանից: Քանի որ բնական գազն ինքն անհոտ է, դրան ավելացվում է չնչին քանակի հոտավետ նյութեր, որոնք կոչվում են մերկապտաններ, որպեսզի գազի արտահոսքը հեշտությամբ հայտնաբերվի: «Southern California Gas Company»-ն օգտագործում է Scentinel® T-50 կոչվող հոտավետ նյութը, որը պարունակում է երկու բաղադրիչներ՝ տետրահիդրոթիոֆին (THT) և տ-բուտիլ մերկապտան: Այս գազերն ուժեղ հոտ ունեն, նույնիսկ օդում շատ ցածր կոնցենտրացիայի դեպքում:

Առողջական ազդեցություններ

Մեթան. մեթանն անհոտ գազ է, և մեթանի առաջնային առողջական վտանգը մեթանի դյուրահրկիզումն է: Մեթանի ներշնչումը նման դեպքերում սովորաբար առողջական ազդեցություն չի ունենում: Փորթեր Ռենչում մեթանի մակարդակների գրանցումները դյուրահրկիզման սահմանափակումներից շատ ավելի ցածր են, և այդ տարածքի բնակիչների համար առողջական մտահոգություն չեն ներկայացնում:

Մերկապտաններ. տվյալ պահին բնական գազի արտահոսքը մերկապտանների շատ ցածր մակարդակներ է արտազատում օդի մեջ: Մերկապտաններն ունեն ուժեղ «փտած ձվի», «սխտորի» կամ «սկունսի» հոտ, և ցածր մակարդակներում կարող են գրգռել աչքերը, մաշկն ու շնչառական համակարգը: Այս պատահարի դեպքում մակարդակներն այնքան ցածր են, որ չեն գրանցվում որոշ ստուգման սարքավորմամբ, այնուամենայնիվ մարդիկ ի վիճակի են զգալ այս հոտերը: Այս ցածր մակարդակի ազդեցությունը կարող է առաջացնել աչքերի, քթի ու կոկորդի գրգռումներ, հազ ու քթի խցանվածություն, շնչահեղձություն, սրտխառնոց, ստամոքսի անհարմարություններ, գլխապտույտներ և գլխացավեր:

Ախտանիշները տարբերվում են՝ կախված հոտի հաճախականությունից ու տևողությունից, և սովորաբար անհայտանում են, երբ հոտի ազդեցությունը դադարում է: Հոտերը կապված չեն երկարաժամկետ առողջական ազդեցությունների հետ, սակայն նրանք կարող են առաջացնել օրական կրկնվող ախտանիշներ որոշ մարդկանց մոտ, քանի դեռ հոտը պահպանվում է:

Հանրային առողջապահության հրահանգը «Southern California Gas Company»-ին

Եթե հոտեր եք զգում և ախտանիշներ ունեք, ԵՎ ցանկանում եք ժամանակավորապես տեղափոխվել ձեր տնից, «Southern California Gas Company»-ն առաջարկում է անվճար ժամանակավոր տեղափոխում ցանկացած մարդկանց, ընտանիքներին ու կենդանիներին:

Տեղափոխումը պարտադիր չէ: Տեղափոխման հարցում օգնության մասին մանրամասների համար զանգահարեք **404-497-6808** հեռախոսահամարով:

Եթե դուք կամ ձեր առողջապահական խնամքի մատակարարն ունեք առողջական հարցեր, խնդրում ենք զանգահարել բժիշկ Cyrus Rangan-ին, Թունաբանության և շրջակա միջավայրի գնահատման բյուրոյի տնօրենին՝ 213-738-3220 հեռախոսահամարով:

Լրացուցիչ տեղեկությունների համար

Լոս Անջելես վարչաշրջանի Հանրային առողջապահության բաժանմունք, 888-700-9995

Հարավային ափի օդի որակի տնօրինման բաժին, 800-CUT-SMOG

Լոս Անջելես վարչաշրջանի հրշեջ բաժանմունք, 323-881-2411

«Southern California Gas Company», 800-427-2000